ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/94

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.05665),

քննելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՄՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 06.11.2020թ. ներկայացված և 06.11.2020թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/94 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.11.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը «Ախտահանիչ միջոցների» ձեռքբերման նպատակով 2020թ. հոկտեմբերի 27-ի որոշմամբ հաստատել է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով մեկ անձից գնման մասին հայտարարությունը (կից փաստաթուղթ թիվ 1), որով հաստատել է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով մեկ անձից Հրավերը, համաձայն որի գնման առարկա է հանդիսանում թվով 1 ապրանք՝ «հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ» անվանումով (կից փաստաթուղթ թիվ 2), որի տեխնիկսկսն բնութագրերի սահմանումները տրված են Հրավերի Հավելված թիվ 6՝ Պայմանագրին կից «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական բնութագիրը» սյունակում (կից փաստաթուղթ թիվ 3):

2020թ. հոկտեմբերի 30-ին ժամը 12:00-ին «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը իր թիվ 2 արձանագրությունում փաստել է մրցույթի մասնակցության համար հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալներն ու գնային առաջարկները, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Հրավերի պահանջներին, կասեցրել է նիստը, որպեսզի մասնակից «Լեյկո» և «Ջի Էն Ջի» ՍՊԸ-ներին հնարավորություն տրվի շտկումներ կատարելու (կից փաստաթուղթ թիվ 4, էջեր՝ 1 և 2, կետեր՝ 1-7):

2020թ. նոյեմբերի 3-ին ժամը 15:00-ին «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը շարունակել է իր կասեցված նիստը, «Ջի Էն Ջի» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված Հավելված 1.1-ը համարել է ընդունելի (կից փաստաթուղթ թիվ 4, էջ՝ 2, կետեր՝ 7 և 8), որոշել է առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին (կից փաստաթուղթ թիվ 4, էջ՝ 3, կետ՝ 9) և հաստատել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կից փաստաթուղթ թիվ 4, էջ՝ 3, կետ՝ 10), որը հրապարակել է սահմանված կարգով (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր՝ 1 - 2), համաձայն որոնց 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է համարվել «Ջի Էն Ջի» ՍՊԸ-ն:

«Խաչպար» ՍՊԸ-ն համաձայն չէ այդ գնահատումների և որոշումների հետ, ուստի՝ ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «ՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2020թ. նոյեմբերի 3-ին, ժամը 15:00-ին կայացած նիստի «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2»-ի

թիվ 8, 9 և 10 կետերով կայացրած գնահատումները և որոշումները, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության «ՀԿԳՄՍՆՀՄԱՊՁԲ-20/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ 2020թ. նոյեմբերի 3-ին, ժամը 15:00-ին կայացած նիստի «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2»-ի թիվ 8, 9 և 10 կետերով կայացրած գնահատումները և որոշումները չեղյալ հայտարարելու մասին:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Համաձայն «ՀԿԳՄՍՆՀՄԱՊՁԲ-20/5» ծածկագրով մրցույթի Հրավերի Հավելված թիվ 6՝ Պայմանագրին կից «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական բնութագիրը» սյունակում առկա պահանջների, ձեռք բերվող ապրանքը «Բազմակոմպոնենտ խտանյութ է, որը որպես ազդող նյութեր պարունակում է ՉԱՄ-երի, և/կամ գունիդինի, և/կամ ալկիլ ամինների խմբերին պատկանող ախտահանիչ նյութեր:» (կից փաստաթուղթ թիվ 3, առաջին պարբերություն):

«Ջի Էն Ջի» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված տարբերակ ներկայացված «Պերօքսիդեզ» ախտահանիչ միջոցը՝ համաձայն ՀՀ ԱՆ կողմից 2019թ. հուլիսի 31-ի թիվ 2099-Ա հրամանով հաստատված կիրառման մեթոդական հրահանգի (կից փաստաթուղթ թիվ 6, արված նշումները), բաղկացած է 2 տարբեր խմբերին պատկանող ազդող նյութերից, որոնցից մեկը հանդիսանում ջրածնի պերօքսիդը, մյուսը՝ չորրորդային ամոնիակային միացություններին (ՉԱՄ) պատկանող խառնուրդ է:

Հրավերի «տեխնիկական բնութագիրը» սյունակում առկա պահանջները սահմանում են, որ Պատվիրատուի կողմից պահանջվող «հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ» անվանումով ապրանքի բազմակոմպոնենտությունը պետք է բաղկացած լինի ՉԱՄ-երի, գուանիդինի, ալկիլամինների խմբերին պատկանող ազդող նյութերից, այդտեղ ոչ մի նշում չկա ինչպես ջրածնի պերօքսիդի, այնպես էլ ախտահանիչ միջոցներ համարվող՝ բազմաթիվ այլ քիմիական նյութերի խմբերին պատկանող ազդող նյութերի մասին (օրինակ՝ սպիրտների, քլորի, ֆենոլի, ալդեհիդների և այլնի միացություններ պարունակող ախտահանիչ միջոցներ):

Դա նշանակում է, որ Հրավերով պահանջվող ազդող նյութերի 3 խմբերից

«Պերօքսիդեզ» ախտահանիչ միջոցի ազդող նյութերից միայն մեկն է համապատասխանում ՉԱՄ-երի խմբին, իսկ գուանիդինի և/կամ ալկիլամինների խմբերին համապատասխանող ազդող նյութեր «Պերօքսիդեզ» անվանումով ապրանքի մեջ չկան, այսինքն՝ «Պերօքսիդեզ» անվանումով ապրանքը չի համապատասխանում «ՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/» ծածկագրով մրցույթի Հրավերի Հավելված թիվ 6՝ Պայմանագրին կից «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական բնութագիրը» սյունակում սահմանված պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը «Ջի Էն Ջի» ՍՊԸ-ի կողմից 2020թ. նոյեմբերի 3-ին ժամը 15:00-ին կայացած նիստին որպես շտկված տարբերակ ներկայացված Հավելված 1.1 –ում առկա՝ «Պերօքսիդեզ» ախտահանիչ միջոցը պետք է գնահատեր որպես Հրավերի պահանջներին չհամապատասխանող և այս հիմքով պետք է մերժեր «Ջի Էն Ջի» ՍՊԸ-ի հայտը, հետո նոր միայն անցներ մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատումներին, ինչը սակայն չի կատարել, թույլ տալով գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.11.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենն ապահովել է իր մասնակցությունը և պնդել է բողոքը:

<u>2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 09.11.2020թ. թիվ 04//28795-2020 գրությամբ բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան Ձեր 2020թ. նոյեմբերի 6-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/16722-2020 գրության կից ներկայացնում եմ «Խաչպար» ՍՊԸ-ի 06.11.2020թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ փաստաթղթերը, մասնավորապես «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման գնման հրավերը, գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը, ընթացակարգի մասնկիցների հայտերը (ներառյալ գնահատող

հանձնաժողովի կողմից հայտերում արձանագրված շտկման վերաբերյալ ծանուցումներն ու մասնակիցների շտկված հայտերը), ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը, դրա տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող՝ կայքից արտատպված փաստաթուղթը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող, քանի որ պարունակել են հրավերով ձեռքբերվելիք բազմակոմպոնենտ խտանույթի համար սահմանված 3 կոմպոնենտներից առնվազն մեկը և համապատասխանել են սահմանված մնացած բոլոր պահանջներին:

Ինչ վերաբերում է «Խաչպար» ՍՊԸ-ի պնդմանը, թե տեխնիկական բնութագրով պահանջվող բազմակոմպոնենտ խտանյութը պետք է պարունակի նշված երեք կոմպոնենտները միասին, ապա հայտնում ենք, որ «կամ» շաղկապի կիրառման դեպքերը և մեկնաբանումը սահմանված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում: Մասնավորապես, վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, ապա չի կարող կիրառվել «կամ» շաղկապը, իսկ 3-րդ մասին համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

Հետևաբար, հրավերով նշված ապրանքի տեխնիկական բնութագրով պահանջվող բազմակոմպոնենտ խտանյութը համարվել է ընդունելի, քանի որ պարունակել է նշված կոմպոնենտներից մեկը կամ առնվազն մեկը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.11.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և կից ներկայացված ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգին:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.3 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

4. Նույն արձանագրության 8.1 ենթակետով արձանագրվել է, որ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ամբողջությամբ շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

5. Նույն արձանագրության 9.1 ենթակետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող (ընտրված) մասնակից է ճանաչվել «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 06.11.2020թ. ներկայացված բողոքը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 09.11.2020թ. թիվ 04//28795-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՀՀԿԳՄՍՆՀՄԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը</u>***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Այսպիսով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և կից ներկայացված ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.3 կետով արձանագրված անհամապատասխանությունը:

Արձանագրության 8.1 ենթակետով արձանագրվել է, որ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ամբողջությամբ շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Արձանագրության 9.1 ենթակետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցնող (ընտրված) մասնակից է ճանաչվել «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Հրավերի «տեխնիկական բնութագիրը» սյունակում առկա պահանջները սահմանում են, որ Պատվիրատուի կողմից պահանջվող «հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ» անվանումով ապրանքի բազմակոմպոնենտությունը պետք է բաղկացած լինի ՉԱՄ-երի, գուանիդինի, ալկիլամինների խմբերին պատկանող ազդող նյութերից, այդտեղ ոչ մի նշում չկա ինչպես ջրածնի պերօքսիդի, այնպես էլ ախտահանիչ միջոցներ համարվող՝ բազմաթիվ այլ քիմիական նյութերի խմբերին պատկանող ազդող նյութերի մասին (օրինակ՝ սպիրտների, քլորի, ֆենոլի, ալդեհիդների և այլնի միացություններ պարունակող ախտահանիչ միջոցներ):

Դա նշանակում է, որ Հրավերով պահանջվող ազդող նյութերի <u>3 խմբերից</u>

«Պերօքսիդեզ» ախտահանիչ միջոցի ազդող նյութերից միայն մեկն է համապատասխանում ՉԱՄ-երի խմբին, իսկ գուանիդինի և/կամ ալկիլամինների խմբերին համապատասխանող ազդող նյութեր «Պերօքսիդեզ» անվանումով ապրանքի մեջ չկան, այսինքն՝ «Պերօքսիդեզ» անվանումով ապրանքը չի համապատասխանում «ՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/» ծածկագրով մրցույթի Հրավերի Հավելված թիվ 6՝ Պայմանագրին կից «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» Հավելված թիվ 1-ի «տեխնիկական բնութագիրը» սյունակում սահմանված պահանջներին»:

Այսպիսով՝ ըստ «Խաչպար» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող բազմակոմպոնենտ խտանյութը պետք է պարունակի նշված երեք կոմպոնենտները միասին, մինչդեռ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված «Պերօքսիդեզ» ախտահանիչ միջոցի ազդող նյութերից միայն մեկն է համապատասխանում:

Այսպես՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Վերը նշված նորերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ***ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

«ՀՀԿԳՄՍՆՀՄԱԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանվել է գնման առարկայի՝ հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների, հետևյալ պահանջը՝ «Բազմակոմպոնենտ խտանյութ է, որը որպես ազդող նյութեր պարունակում է ՉԱՄ-երի, ***և/կամ*** գունիդինի, ***և/կամ*** ալկիլ ամինների խմբերին պատկանող

ախտահանիչ նյութեր»:

«Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, նշվել է. «Պերօքսիդեզ ախտահանիչ միջոցը իրենից ներկայացնում է համասեռ, թափանցիկ կալ թույլ օպալեսցենտող, անգույնից մինչև բաց-դեղին գույնի, թույլ յուրահատուկ հոտով, խտացված հեղուկ: Միջոցի պարունակության մեջ որպես ազդող նյութեր, մտնում են ջրածնի պերօքսիդ 18,0% չորրորդային ամունիումային միացությունների (ՉԱՄ) խառնուրդ (ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ և դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ) 12,0% (գումարային) թթուների համալիր (կաթնաթթու, օրտոֆոսֆորաթթու, լիմոնաթթու) 15,0% (գումարային), ինչպես նաև օգնող բաղադրիչներ՝ ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), կայունացուցիչ, կոռոզիայի ինհիբիտոր, ապաիոնիզացված ջուր»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, ապա չի կարող կիրառվել «կամ» շաղկապը</u>***:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում՝</u>***

<u>1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, կամ</u>

<u>2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:</u>

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործի քննությամբ ներկայացված փաստարկները, «ՀՀԿԳՄՍՆՀՄԱՊՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ բողոքով վիճարկվող մասով, համադրելով այն «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված տեխնիկական բնութագրի հետ, միաժամանակ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջները՝ արձանագրում եմ հետևյալը. քանի որ «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով «Պերօքսիդեզ» ախտահանիչ միջոցի ազդող նյութերից առնվազն մեկը համապատասխանում ՉԱՄ-երի խմբին, ուստի

գնահատող հանձնաժողովը, բավարար գնահատելով «Ջի-Էն-Ջի» ՍՊԸ-ի հայտը, գործել է վերը նշված իրավակարգավումներին համապատասխան, հետևաբար գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 06.11.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**